ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԵՐ

Ֆրանսիայից ժամանած Հայ Եկեղեցական Ժողովի պատգամավորները իրենց հետ բերել են իրենց նվեր Սովետական Միության Գեներալիսիմուս մեծ ՍՏԱԼԻՆԻՆ հնագույն մարոկական սուր։

Օրերս այդ սուրը հանձնվեց արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության ներկայացուցիչներին՝ ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ ուղարկելու համար հատուկ ուղերձով։

«Մեծ ՍՏԱԼԻՆԻՆ, Սովետական Միության Գեներալիսիմուսին, որն առաջնորդեց աշխարհի ժողովուրդները քաղաքակրթության ամենանենգ թշնամուց՝ գերմանական ֆաշիզմից— լավագույն բարեկամին հայ ժողովրդի, որն իր իսկական ազատությունն ու անկախությունը գտավ Սովետական Հայաստանում— այս հին սուրը անսահման երախտագիտությամբ մատուցում են ճակատագրի բերումով Ֆրանսիայում ապրող հայ հայրենասերները։

Ֆրանսիայում ապրող հայ հայրենասերների հանձնարարությամբ Հայ Ազգային Ճակատի նախագահ՝ *Հ. ՄԱՐՄԱՐՅԱՆ*
Ընդհանուր քարտուղար՝ *ՄԵՍՐՈՊ ԱՍԱՏՐՅԱՆ*

(*«Սովետ. Հայաստան»*, *հուլիսի* 6,
1945 *թ.*, № 134 (7387)